

մի էր Աւստրիոյ, բայց գիտցաւ ՚ի զի-
պղ առթի իր օգնականութեամբն և
հաւանութեամբ նուածել զջանիմարդ .
և ապա իտալական դաշնակցութեամբ
զնոյն ինքն զլլւստրիա, և հուսկ ապա
գերմանական ազգային զօրաւոր միու-
թեամբ՝ զգաղղիա, և այսպէս առաջին
տէրութեանց կարդը դասաւորեց զիրու-
սիս :

Պ. Պիզմարբ նմանողութեան օրինակ
առած է իրեն զգրեգերիկոս Բ. և սնած
ու մեծցած նոյն հորիզոնին և նոյն մոտա-
ծով թեանց մէջ, վասն զի քննելով այս
մեծ ուսուցչին օրինակներն և խորհե-
լով անոր կենացն ու գործոց վրայ, ներ-
կայացուց Եւրոպիոյ նորագիծ պատկեր
մ'այն հանճարոյ՝ որ պայծառացոյց
զիբուսիա դարուս սկիզբը, և մեծցուց
ու փառաւորեց դարուս վերջը : Իր պայ-
ծառ, մեծարաց ու հրատեսիլ աչկոնքը
և լայնաճակատ գլուխը՝ կը վկայեն իր
մեծութեանը, և յայտնապէս կը ցու-
ցընեն թէ այդպիսի անձ մ'առանց
հետոց կամանշան չէր կրնար անցնիլ
աշխարհիս տեսարանին վրայէն :

Եղան ոմանք որ ուզեցին բաղդատել
Պիզմարբ կոմնը բավուրի հետ, և ի-
րաւցնէ թէ որ նոր Պլուտարքոս մ'ու-
զենար զուգակցութիւն ընել երևելի
արանց, բնական կերպով կը յորդո-
րուէր համեմատել վիկտոր լիմանուէ-
լի պաշտօնեայն Գուլիէլմոսի պաշտօ-
նէին հետ : Մին ՚ի բիէմնդ ծնաւ զգա-
ղափար միութեան իտալիոյ, և միւսն
՚ի Բիուսիա միաւորեց զգերմանիս :

Բայց այս նոր Պլուտարքոսը կը նշա-
նակէր անշուշտ նմանութեանց հետ և
աննմանութիւնը: Քավուր ջնանաց նախ
ազգին մտացը մէջ ծնանել զգաղափար
միութեան, և ապա իշանել ՚ի գործ .
ազատութիւն և հաւանութիւն ժողո-
վրդեան, ահաւասիկ գործէր Քավուրի .
իսկ Պիզմարբ իրեն գործոց հիմ գրա-
զգօրութիւն զինուց . ուստի գերմանա-
կան միութիւնն աւելի զինուց արդինք
է քան ազգային հաւանութեան :

ՄԱՀ ԹՍԴԱԽՈՐԾՅ ԳԱՂՂԱՑ

Պատմութեան ուսումը մեծ և գեղեցիկ
գարցոց կամ մատեան մ'է, յորում միով
հայեցուածով կը նկատենք զանցեալն իր
ամենայն երկութովը . բայց զգբախտու-
թինն այն եղած է որ առասպեկտ ազտա-
ցուցած են ուրեք ուրեք այս մեծ մատենին
մէկ քանի էջը: Թէ պատմութեան մ'է, յո-
ւատմութեան ուսումը, բայց ամենուն
քննութեան նպատակը նոյն չէ. տղան զրո-
սեցոցիշ գէպէեր կը վնատէ անոր մէջ, ո-
րով գոհացնէ իր հետարքիր երևակա-
յութիւնը. պատերազմականը նիւթական և
գազանական մասանց ուշ կը գնէ, ինչպէս՝
պատերազմաց, յաղթութեանց և աշխար-
հակալութեանց, որոնք ազգաց և ժողո-
վրդոց պարծանք համարուած են: Քազա-
քագէտն ու օրէնսդիրը կը քննէ մեծ կամ
փորց պատահարաց պատմաններն ու հե-
տեանքը, և ըստ այնմ կարգ կը գնէ իր
գործոցը: Խսկ որ անկարծելին է, նոյն խսկ
և թիշկն ունի իր սորվելու մասերը. երբ
կը կարդայ մեծամեծաց և իշխանազանց
յանկարծադէպա մահերը, կը սկսի հորհըրդ-
ածել և հարցնել ատոնց պատճառը: Ա-
նիրը ե ընտանեկան հիւանդութիւնք, մա-
հագեղք և խառնագնաց կեանք ահաւասիկ
դաշնիք թագաւորազմանց :

Առանց հին ժամանակաց պատմու-
թիւնը քննելու, թէ ինչ կերպով մեռան
Ալեքսանդրը, Գերմանիկոս, Տիփտանիկոս
և այլք, գուղգիական թժիչք քննելով ազ-
գային պատմութիւնը, այս վերջին երեք
դարուց մէջ այնպիսի մահեր գտան որ
մտածութեան նիւթ եղաւ. Գննութեան
առին թէ արդեօք իշխանաւորաց տա-
րածամ ու անկարծելի մահերն երկնա-
յին վրէժխնդրութեան ընճայիլու է, ինչ-
պէս կը կարծուի Փիլիպպոս Գեղեցիկն և
իր յաջորդաց համար ՚, թէ թունէր և կամ
ընտանեկան ախտաւորութեանց հիւալուա
(Dubois) Ամիանցին, իր կենաց վերջին օ-
րերուն հաճութեամբ կը քննէր հոչակաւոր
մարդոց և մեծամեծաց մահուան պատ-
ճառները: Պ. Լիդրէ (Littre) իր մէկ գը-
րուածքին մէջ կը մերժէ այն կարծիքն որ
կը համարի թէ Օռէւանի դքսուհին Հան-

1 Փիլիպպոս Գեղեցիկ մեռաւ յամին 1314 քա-
ռասուն և մեց ամեայ: Լուդովիկոս լը Հոգէն
1316ն, քան և եօթն ամեայ. Փիլիպպոս Ե.
1322ին քան և ութ ամեայ. Կարոլոս Դ. 1328ին
երեսուն և չորս ամեայ:

րիէդ-Աննա Անգղիականն մահադեղով վախճանած ըլլայ. Պ. Փիլլըրիէ (Cullerier) կը հարցնէ թէ ինչպիսի մահուամբ մեռաւ արգեօք քրանկիսկու Ա. Այս թագաւորն անառակ ու խառնագնաց կեամբ մը կը վարքէր, և ահա ասոր կ'ընծայեն իր մահը պատճագիրք ժամանակին:

Քրանկիսկու Ա. ամեւսնացած էր լուդովիկոսի թի և Աննայի Անգղիականի դըտեր հետ, ուսկից ծնաւ եօթն որդի.

Ա. Գրանդուկոս, թագաւորակաց, որ ծնաւ յամին 1517 գետրուար 28, և մեռաւ 1536ին թունաւորեալ, ինչպատճէ կը պատմեն, ՚ի Սերաստիանոսէ Մոնդէրուուլնայ:

Բ. Կարոլոս, դուքս Օսկանո, մեռեալ ՚ի Շիրարտիս յամին 1545 ՚ի կողացաւոյ կամ ՚ի ժամանակին ժամանակամիտէ, քսան և ինն ամեայ:

Գ. Լուիջոս, որ ծնաւ 1515ին և մեռաւ 1517ին, երկամեայ:

Դ. Շարլուան, որ ծնաւ յամին 1516, և մեռաւ յամին 1524, ութամեայ:

Ե. Հերերակոս Բ. որ ծնաւ 1518ին մարտի 31, և մեռաւ 1559ին, յանկարծագէպ մահուամբ նիզակիանացութեան ատեն, քառասուն և մի ամեայ:

Զ. Մարտինէ, որ ծնաւ 1520ին, ամուսնացաւ Սկովտիոյ թագաւորին հետ. բայց քիչ ժամանակ ետքը յամին 1557 մեռաւ ծիրական ջերմիւ, եօթն և տասնամեայ:

Է. Մարտինէ, որ ծնաւ 1525ին, ամուսնացաւ 1559ին Սամուիլ Հմմանուէլ Փիլիպպոս դրսին հետ, և մեռաւ 1574ին յիսուն և մի ամեայ:

Հենրիկոսի թի մահն այս կերպով եղաւ. Յամին 1559 յունիսի 30 իր քրոջը Մարգարիտի ամառայի Սալիցիոյ քսին հետ, և իր դստերը Եղիսաբեթին Փիլիպպոսի թի հետ հարսնախօսութեան առթիւ, հրամացեց որ չքեզ հանդէսներ կատարուին հանդերձ նիզակախաղութեամբ Հենրիկոսի թ շատ ախցենաց դէմ քաջութեամբ կուռեէն ետքը, կարգը Մոնկոմերի (Montgomery) պատսնի կոմսին նկատ. որուն հետ արութեամբ կոռուելով, երկուքին նիզակն ալ փոփոխակի իրարմէ Զախշախուեցան. և Այն, կոմքը չուղելով ըստ օրինաց գետին ճգել միշտ ճեռքը բռնեց ՚ի վար խոնարհած. բայց դիսուածով թագաւորին զվինի զարնուելով գլխանոցին ուղղութեամբ, ՚ի վեր առաւ զայն և պայթուց աչքը: Զեռք տուին վրաւորելոցն իշնել երիվարէն. ՚ի բաց ա-

ոին զվարանոցը և փութացին սենեակը տանելու: Հենրիկոսի իմացաւ վէրքին ծանրութիւնն և թէ մահացու էր հարուածը:

Հենրիկոս Բ. տասը զաւակ ունեցաւ, հինգ ուստոր և հինգ գուստոր:

Ջ. Գրանդուկոս Բ. որ ծնաւ 1545ին, և մեռաւ 1560ին եօթն և տասնամեայ:

Ի. Լուիսուկոս Ուլւանոս, որ մեռաւ երկու և կէս ամեայ յամին 1550:

Ջ. Կարուլոս Թ. Մաքսիմիլիանոս, մեռաւ ՚ի թորացաւ ախտէ 1574ին, քսան և չորս ամեայ:

Դ. Հերիոն Գ. մեռաւ 1589ին աւազակաւլ երեսուն և ութ ամեայ:

Ե. Գրանդուկոս, դուքս Ալանսոնի, մեռաւ իր եղօրը պէս ՚ի թորացաւ ախտէ, յամին 1584 երեսուն ամեայ:

Հենրիկոսի թի հինգ դստերքն ևս նման ճակատագիր մ'ունեցան:

Ա. Ելիսաբեթ Գալլիանոս, որ ծնաւ յամին 1543, երրորդ ամուսին Փիլիպպոսի թի Սպանիոյ թագաւորին, և մեռաւ 1568ին, քսան և երեք ամեայ, թողլով երկու զաւակ:

Բ. Կալետոն Գուլյանոս, ծնաւ 1547ին, ամուսին Կարլոսի թի գրսին Լոռենայ. մեռաւ յամին 1575, քսան և եօթն ամեայ, թողլով ինը զաւակ:

Գ. Մարտինէ Վալուս, ծնաւ 1553ին. առաջին ամուսին Հենրիկոսի Դի. մեռաւ ՚ի Բարիկ յամին 1615, վաթսուն և երկու ամեայ:

Դ. Յուզանս Գալլիանոս ։ Քորք երկուորեակը, մնեալը յամին 1556 յունիս 24. որոց առաջինը մեռաւ մէկու կէս ամսեայ, և երկորդն անդէն ՚ի ծնանելն:

Ահաւասիկ երկու ազգատոհմ և մերունդը որ անհետացան բոյորովին եօթանասուն և չորս տարուան միջոց (1515-1589), թէ և բազմաթիւ ու բազմաբեղուն. ահա շար մ'իշխանաց և իշխանուհեաց, վախճանեալք ՚ի ծաղիկ Հասակի, ոմանք հիւանդութեամբ և այլք մահադեղով Մէջերնէն մէկը միայն վրիպեցաւ. Մարգարիտէ Վալուս, առաջին կին Հենրիկոսի Դի, որ մեռաւ վաթսուն և երկու տարուան. Ուրիմն այսամբ զօրացաւ մահը, և կլեց քիչ տարուան մէջ ամբողջ երկու ազգատոհմ:

Ախտաբանական բնդ հանուր օրէնք մը կայ .
որուն առջին ամենքն ալ պէտք է խանար-
ձն, թէ իշխանն և թէ ռամիկը . և է արե-
նական ու ժառանգական հիւանդութիւն :
Թագուորակսն և իշխանական ընտանեաց
դահճն անառակ ու խառնազնաց կեանքն
է, որ կը կանիչէ իրենց մահը . և թէ պէտ
աւելի կամնուազ սովորական է ամեն ար-
քունեաց, բայց աւելի զգապի երաւ ի գաղ-
ղիական արքունիս՝ այս վերջին երեք դա-
րուց միջոց :

Այս արքայական մահերը քննելէն ետքը,
թէ որ ուզենանք զեգերիլ քիչ մ'ալ իշխա-
նական ապարանից մէջ հօն ալ նոյնպէս
կը պատահինք շատ տեսակ հիւանդու-
թեանց, որ կը գարսմանցն զմեղ :

Լուգովիկոս ժ՞ի շատ մը պայագատաներ
ունեցաւ ուղղագիծ կամ անուղղագիծ, զո-
րոնք անիսնայ հարուածեց մահը, և սկսաւ
նախ իր անդրանիկ զաւկէն : Ժամանակին
միշտակարանքը կը պատմեն որ արքայ-
որդին դաշտի մը մէջ շրջագայելու ատեն,
քահանայի մը կը պատահի, որ վերջին
թոշակ կը տանէր օրիորդի մը ծագկախ-
առիւ բմբոնեալ, և նոյն տունը կը մոնայ
ուր էր հիւանդը, թէ պէտ արքայորդին
՚ի մանկութեան անվանագ նանցեր էր նոյն
հիւանդութենէն, բայց սաստիկ տպաւո-
րութիւն կ'ընէ վրան այդ տեսարանը,
և իրիկուան քաղաք գտնալով, կ'իմա-
ցընէ բժշկին կրած տպաւորութիւնն ու
զգացած երիւղը : Երկրորդ օրը տկարու-
թիւն զգալով՝ անկողին կ'ինայ : Միւս
օրն կը ծանրանայ, ժամ՝ առ ժամ՝ կը սաստ-
կանայ, կը տունապէ զընսանիս, յոյս չը-
կայ, վերջապէ կը վախճանի : Առանց խո-
րաքնին մտածութեան արտաքրուստ բացա-
յաց կ'երեկի այստիսի մոհւան պատճա-
ռը. բայց թէ որ յաւ քննելու ըլլանք տաւ
րակոյս կը վերցնէ, որուն վրայ կը լսեն յի-
շտակարանք ժամանակին : Եւ այս հան-
դիպեցաւ յամին 1744 ապրիլ 14:

Արքայորդուոյն որդիքն իսկ իրեն նման
ապերչանիկ եղան . լուգովիկոս դուքսն
Պուրիսնեի, և Կարոլոս դուքսն Պերիի : Իսկ
Անձուի դուքսը մեռաւ ՚ի Սպանիա ախուր և
մելամաղձու կենօք, ուր թագաւորեր էր

Փիլիպոս Ե. անուամբ : Պուրիսնեի դրսին
և իր մանկամարդ ամուսնոյն անակնիալ
մահը շատ խօսակցութեանց և մեխու-
թեանց նիւթ տուաւ . և այսօր իսկ հասա-
րակաց կարծիքն որոշեալ չէ յայնմ մասին :
Մարիամ-Ատելախտէ, գուստոր արքային
Սորտենից, դրանի Պուրիսնեի, քսան և
վեց ամեաց էր, մեծապէս սիրեի արքու-
նեաց մէջ՝ բայց յամին 1712 յունուար 18,
սաստիկ տկարութիւն զգալով, անկողին
կ'ինայ և երեւը կը սկսի այսոնու : 19ին
սաստիկ գողումն կու գաց վրան : 20ին չեր-
մը կը սաստկանայ . յունուարի 22ին սաս-
տիկ ցաւ մ'է կը սկսի զդալ ՚ի ծամեկիս, որ
ամբողջ երկրորդ օրը կը տեէ, խորունկ
թմբրութիւն մը պատճառակեցվ : Խրիկունը
կը կրկնէ ցաւն ու բրանքը, և անհանգիս
գիւեր մը կ'անցընէ . ցաւն տեւիլ կը սաստ-
կանայ երկրորդ գիւերը և կը ծանրանայ
միւս օրը : Ապա կապուտակ այսուցք կ'հ-
րեան, և իշխանուհին երեկոյեան ժամը
վեցին կը վախճանի և անյատ կը մնաց
պատճառը :

Մարիամ-Ատելախտէի մահուանէն քիչ
օր ետքը, կը հիւանդանայ և իր ամուսինը
դուքսն Պուրիսնեի : Կը կանչէց բժիշկը և կ'հ-
մացնէ թէ մահացու հիւանդ է : Կարծես
բորբռեալ եմ'ի ներբռւստ, կ'ըսէր : Իրեն
երեսացց վրայ ալ կ'երեխն կապտագոյն
այտուցք . բժշկը կը խոռվին զարձեալ,
պատճառն անիմանալի է . թունաորուած
է կ'ըսեն, և հիւանդը կը մեռնի 1712ին
փետրուար 18 : Մի և նոյն տարին կը մեռ-
նի գարձեալ Պուրիսնեի գեսին ծաղկահա-
սակ որդին դուքսն Պերիանեի, թողով իր
լուղովիկոս եղօրօն արքայական պատինն
ժամանգութիւնը : Երկու տարի վերջը կը
մեռնի և դուքսն Պերիի կարլոս, կասկած
տարով թէ թունաորուած ըլլայ :

Լուգովիկոս ժ՞ի ութը օրինաւոր և հինգ
ապօրինաւոր որդի ունեցաւ : Ապօրինաւորը
մեռան ամենքն ալ ՚ի ծաղիկ հասակի, և
բոլորովին ընդհաւուեցաւ անոնց յաջորդու-
թիւնը յամին 1850 : Իսկ օրինաւորացը՝ յետ
զանազան ցնցմանց, կանկ առաւ ՚ի կոմն
Շամպոր՝ առանց յաջորդութեան, որուն
մահուամբը կը թուի թէ իր ցեղն ալ պիտի
անհետանայ :